43. Էն տեղ՝ էն լրուսու ձեւով խորանքտեկաց կամաը քաշեց[1], սեղանաբս[2] քեաշեց, վիման տեղն էլ քեաշեց, ասաց. էսա ոկնայ պիտի շինուի, քիւնչի վանքը խոնարխվեր էր: Տառցաւ էկաւ մօտ խօրհրդէրներ. ձէն խոգեց գլօխ, էսայ տաղն ասաց:

44. «Օրհնեա՛լ բարերար Աստուած. խնամք շատ էր մեծ թագաւորուն: Խէրախոտ խօրհրդէր, տիւ էլ վեր էլի քըոյ անուշ քընուց, մարմար քեաբն էլ բացուեր ի, լրսոն կամաը կապեր ի մէջ Ծովասարին. քեզնէ կուզեմ 50 հատ ուսթայ[3], կուզեմ 50 հատ էլ քեաբ կտրող, 50 հատ էլ քեաբ տվող, 50 հատ կաւ արող, 50 հատ էլ կաւ տվող, 50 հատ էլ ջիւր կրող, 40 վարդապետ, 40 սարկաւագ: Երկու շաբթի ձեռ թալենք վանքն Մարութին շինելու. ուրբաթ օրն էլ պռծնենք. լրսոն շաբաթ օր՝ սուրբ անմախ պատարագն մէջ մատուցենք»:

45. Էս խօսքի վէրէն խօրհրդէրներ վեր թռան, ասին Դաւիթին. «Հօ՛ տղայ, էլնենք էրթանր էտ լրսոս տեսնանք: Իրեքն մէյտեղ էլան գնացին տէսան որ, հալայ լրսոն կամաը կապեր էր վեր վանքին. Տաւիթն էլ էն լրուսու ձեւով եռ[4] քեաշեր էր խորանքտեր շինելու:

46.—Զէնով Յովան ասաց. ես՝ էս լաճու խորխուրտ պիտի կատարեմ: Դառձաւ Տաւիթին ասաց. ծո՛. տղայ, էլի 6 հատ վէրու եզ զարկ առնենք էրթանք քեաղաք, պատիւ տանք քեաղաքցոց, էն ժամանակ ուսթէքն էլ վարտապետներն էլ սարկաւագներն էլ պիթիւն կժողուվեն, տիւն էլ քըոյ որտի մուրատին կհասանես, վանք կշինուի: Տաւիթ 6 հատ վէրու եզ զարկեց. մէյմէկ էրկու խատական շլկեցին գնացին քեաղաքը պատիւ տվին:

47. Ղորտ որ, Դաւիթ ինչս որ խնտրեր էր ըսկուն կատարվաւ, ուսթէք, քեսխանէք, սարկաւագներ հըմէն էլ հաղըր եղան. էրկշաբթ ձեռք զարկին վանք շինելու, ուրբաթ օր լմընցան, մէկէկ օրն էլ անմախ պատարաք մատուցին. վանք միաբանով լցուցին:

Զ.

48. Ժամանակէ մը սորայ Մորայ Թագաւոր լմացաւ որ Սանուա Թագաւորութեն հաստատվեր ի, վանքն Մարութին շինվեր ի, 40 վարդապետ, 40 սարկաւագ մէջ լեցուցեր ին: Թագաւոր ասաց. էլնեմ խեծել առնեմ էրթամ վանքն Մարութին թալնեմ բերեմ, որ ինոնց թագաւորութեն չբաղմանայ:

1 Գծեց: 2 Սեղանի տեղ: 3 Խրօխպէրներ արհնցեր կեսխտիկ ականճ կանէին: 4 Գիծ. սատանի եռ—սատանայի գիծ: